ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՄԱՐՄԻՆ
ARMENIAN REVOLUTIONARY FEDERATION-DASHNAKTSUTYUN
SUPREME COUNCIL OF ARMENIA

25/03/2025թ.
N 019

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ավինյան

Հայտնում ենք Ձեզ, որ Հայոց ցեղասպանության 110-րդ տարելիցի կապակցությամբ ՀՅԴ Հայաստանի երիտասարդական միությունը և «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միությունը 2025թ. ապրիլի 23-ին նախատեսում են կազմակերպել ավանդական դարձած «Ջահերով երթ»:
Միջոցառումը սկիզբ է առնելու ապրիլի 23-ին, ժամը 18:00-ին Հանրապետության հրապարակում: Ժամը 20:30-ին երթի մասնակիցները հուշահամալիր կշարժվեն՝ Հանրապետության հրապարակ-Ամիրյան փողոց-Մաշտոցի պողոտա-Բաղրամյան պողոտա – Բարեկամության կամուրջ-Կիևյան փողոց- Ծիծեռնակաբերդ երթուղով:
Միջոցառումը կավարտվի մինչև ժամը 24:00-ը Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում:
Մեր կանխատեսմամբ երթին կմասնակցեն 7-10 հազար երիտասարդներ:
Նախաձեռնությանը մասնակցելու պատրաստակամություն են հայտնել մի շարք ուսանողական, երիտասարդական և հասարակական կազմակերպություններ:
Հանրային հավաքի ընթացքում օգտագործվելու է բեմ, էկրան և գեներատոր, երթի ընթացքում կօգտագործվեն ջահեր, մոմեր, դրոշներ, պաստառներ և ձայնային տեխնիկա: Նախատեսում ենք շուրջ 100 կարգադրիչներ, ովքեր կապահովեն անվտանգությունը:
Հավաքի և երթի ղեկավարումը հանձնարարել ենք Նարեկ Համլետի Վանյանին:

Խնդրում ենք Ձեր աջակցությունը:

ՀՅԴ Հայաստանի ԳՄ Ներկայացուցիչ
Իշխան Սաղաթելյան

Հանրապետության 30, Երևան, Հայաստան, 0010 Հեռ: +374-10-52-15-02, Էլ-փոստ: hydgm1890@gmail.com Կայք: http://www.arfd.am
Hanrapetutyun 30, Yerevan, Armenia, 010 Tel: +374-10-52-15-02, E-mail: hydgm1890@gmail.com, Website: http://www.arfd.am